

ինչով է մի արդքան մեզանից տարբերում, — անհամբերութեամբ քայտականչեց Պա. էլ Պետրովիչը: — Բոլորը, բոլորը արդ պարոնի, արդ նիհիլիստի բանն է նա է որդուդ գլուխը լցրել: Ինչպէս ատում եմ արդ հաքիմին. իմ կարծիքով դա ուղղակի խարերալի մէկն է. հաւատացած եմ, որ նա իւր բոլոր գորտերով հանդերձ, բնագիտութեան մէջ էլ շատ առաջ գնացած չը պիտի լինի:

— Ոչ, եղբայր, արդ բանը մի ասի՝ — Բաղարովը խելօք ու հասկացող մարդ է:

— Եւ ինչպիսի զոռելի ինքնասիրութիւն ունի, — դարձաւ ընդհատեց Պա. էլ Պետրովիչը:

— Այո — նկատեց Նիկալայ Պետրովիչը. — ինքնասէր մարդ է: Բայց, ինչպէս երևում է, առանց դրան կարելի չէ. միայն մէկ բանի խելքս չի հասնում: Կարծեմ թէ ես ամեն բան անում եմ, որպէս զի դարիցս լետ չմնամ՝ — գիւղացիներին ճորտութիւնից ազատեցի, տուն ու տեղի տէր արի, ազարակ հիմնեցի, այնպէս որ մինչև անգամ բոլոր նահանգում ինձ կարմիր են անուանում. կարդում եմ, ուսանում, առհասարակ աշխատում եմ ժամանակակից պահանջներին համապատասխան լինել, — իսկ նրանք ասում են, թէ արդէն բանս պրծած է: Ինչ ասեմ, եղբայր, ինքս էլ եմ սկսում կարծել, թէ ձիշտ որ բաներս պրծած է:

— Ինչից ես կարծում:

— Այ՛ ինչից: Այսօր նստած Պուչկին էի կարդում...: Որքան լիշում եմ, բաց էի արել «Пыраге»...: Մէկ էլ տեսնես Արկադ'ին մօտեցաւ ինձ և, անխօս, փաղաքուչ ցաւակցութեան զգացմունքը դէմքին, գիրքը կամացուկ վեր առաւ ձեռքիցս, ոնց որ երեսիւն են անում, և առաջս դրեց մի ուրիշ, գերմաներէն գիրք... ժպտաց ու գնաց, և Պուչկինն էլ հետը տարաւ:

— Միթէ: Այդ ինչ գիրք էր տուածը:

— Ահա, այս գիրքը:

Եւ Նիկալայ Պետրովիչը սերթուկի կտակի զրպանից հանեց Բլահների լատինի գրքոյկի իններորդ հրատարակութիւնը:

Պա. էլ Պետրովիչը վեր առաւ գրքոյկն ու շուռ ու մուռ փռեց:

— Հմ, — մռնչաց նա: — Արկադիյ Նիկալայիչը հոգ է տանում քու դաստիարակութեան վրայ: Հը՛, ինչ է, փորձեցիք կարդալ:

—Փորձեցի:

—Յետո՞ւ:

—Այամ ես եմ լիմարը, կամ թէ չէ այս բոլորը—անմխարաներ են: Սրեհի ես եմ լիմարը:

—Միթէ դերմաներէնդ մոռացած չես,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Դերմաներէն հասկանում եմ:

Պաւէլ Պետրովիչը դարձեալ ձեռքի մէջը շուռ ու մոռտուեց դիրքն ու աչքի տակովը եզրօրը նայեցաւ: Սրկուսն էլ լուեցին:

—Հա, ի դէպ,—սկսեց Նիկայալ Պետրովիչը ցանկանալով խօսքը փոխել.—Այլիպզինից նամակ ստացաւ:

—Մատուէլ Իլլիչից:

—Այո, *** է եկել նահանգի գործերը քննելու: Այժմս նա մեծ մարդ է դարձել և ինձ գրում է, թէ իբրև ազգական ուղում է հետներս տեսնուիլ և ինձ, քեզ ու Արկադիլին քաղաք է հրաւիրում:

—Պիտի գնաս,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Ոչ, դ՛ու:

—Ես էլ չեմ գնալ: Շատ հարկաւորս է լիսուն վերս քաչգամ, թէ ինչ է՝ դրա երեսն եմ տեսնելու: Mathieu-ն ուղում է, որ իւր բոլոր փառքը տեսած լինենք. սատանան տեսնի երեսը. սաղ նահանգում ինչ որ խունկ են ծխելու, այն էլ հերիք է նրան, առանց մերինին էլ եօլա կ'գնալ: Սէ՛՛՛՛ բան, գաղտնի խորհրդական է դարձել: Թէոր ես ծառայութիւնս շարունակած լինէի, այդ լիմար լուծը քաշտալի, այժմս գեներալ-ադիւտանդ դարձած կ'լինէի: Այս էլ կալ, որ արդէն ես էլ, դու էլ լետ մնացած մարդիկ ենք:

—Այո, եղբայր. երեհի ժամանակ է, որ դազաղ շինել տանք ու ձեռներս էլ կրծքներիս խաչենք,—հոգոց հանելով նկատեց Նիկայալ Պետրովիչը:

—Չէ, ես այդպէս շուտով չեմ կոտրուի,—մրթմրթաց եզբալրը.—Դեռ այդ հաքիմի հետ մենք կ'տեսնուենք, ես այդ զգում եմ: Ընդհարումը նոյն օրը երեկոյեան թէլի միջոցին պատահեցաւ: Պաւլ Պետրովիչը որ ընդունարան եկաւ, արդէն պատրաստուած էր կռուի. նա զրգուած էր և վճռական: Մի-ախն առիթ էր փնտրում, որ թշնամու վրայ լարձակուի. բայց երկար ժամանակ առիթ չէր ներկայանում: Բազարովն առ

հասարակ «ծերուկ կիրսանովներին» ներկալութեամբ սակաւ էր խօսում. (նա «ծերուկ էր կոչում երկու եղբայրներին»), իսկ այդ երեկոցեան հոգու վատ տրամադրութեան մէջ էր և լուռ ու մունջ թէլը բաժակ բաժակի ետեից դատարկում: Պաւէլ Պետրովիչը անհամբերութիւնից այրւում էր. վերջապէս նրա ցանկութիւնը կատարուեց: Հարեան կալուածատէրներին մէկի վրայ խօսք քացուեց: «Անպէտք, ազնուականիկ է», անտարբեր կերպով նկատեց Բազարովը, որ նրան Պատերազմը ունի էր տեսել:

—Ներեցէք հարցնեմ,—սկսեց Պաւէլ Պետրովիչը և նրա շրթունքները զողողացին:—Ձեր հասկացողութեամբ «անպէտք» և «ազնուական» բառերը միևնոյն միտքն ունին:

—Ես «ազնուականիկ» ասացի,—պատասխանեց Բազարովը դանդաղ կերպով թէլի ումպը կուլ տալով:

—Շատ լաւ. բայց կարծում եմ, որ ազնուականների մասին էլ նոյն կարծիքին էք ինչ որ և ազնուականիկներին: Պարտաւորութիւնս եմ համարում ձեզ լայտարարելու, որ ՚ս այդ կարծիքին չեմ: Համարձակում եմ ասել, որ ամենքն էլ ինձ ճանաչում են որպէս մի լիբերալ (ազատամիտ) և պրոգրեսս (առաջադիմութիւն) սիրող մարդ. և հէնց դրա համար էլ ես լարզում եմ իսկական արխտոկրատներին (ազնուականներին): Յիշեցէք, մեծարոյ պարոն (այս խօսքերի վրայ Բազարովը աչքը Պաւէլ Պետրովիչի վրայ բարձրացրեց), լիշեցէք մեծարոյ պարոն,—կրկնեց նա զայրագնած,—անգլիական արխտոկրատներին: Նրանք իրենց իրաւունքներից մի նշանախեց անգամ չեն զիջանում, և այդ պատճառով էլ լարզում են նաև ուրիշների իրաւունքները. նրանք պահանջում են, որ կատարուին դէպի իրենց եղած պարտաւորութիւնները, ուստի և իրենք էլ իրենց պարտաւորութիւններն են կատարում: Արխտոկրատիան էր Անգլիային ազատութիւն տուողը ու նա է նրան պահանջողը:

—Մենք այդ երզը շատ ենք լսել,—պատասխանեց Բազարովը,—բայց դրանով ինչ էք ուզում ապացուցանել:

—Էստոնք ասելով ուղում եմ ապացուցանել, մեծարոյ պարոն (Պաւէլ Պետրովիչը երբ որ նեղանում էր, դիտմամբ էր էստոնք ասում, թէպէտ շատ լաւ գիտէր, որ զրական լեզուի քերականութեան մէջ կարելի չէր այդպիսի ձև գործածել: Բայց դա մնացորդ էր Ալէքսանդրեան շրջանի աւանդութիւն-

ների, երբ ժամանակի ականաւոր անձինք, հաղարից մէկ մար-
րենի ընդունով խօսած միջոցին արգպիսի և նման տարօրինակ
ձեեր էին դործ ածում, որպէս զի ցոյց ասն, թէ իրենք ժողո-
վրդի կեանքով են ապրում...) էստոնք ասելով ուզում եմ ա-
պացուցանել, որ եթէ մարդուս մէջ արժանապատուութեան
զգացմունք չլինի, եթէ մարդս դէպի իւր անձը լարգանք տա-
ծելու չլինի—իսկ արիստոկրատները մէջ այդ զգացմունքները
զարգացած են,— ոչ մի հաստատուն հիմք չկայ հասարակաց
bien public *)... հասարակաց շէնքի համար Անհատը, մեծարոյ
պարոն,— ասա որն է գլխաւորը. մարդկային անհատը պէտք
է ժալուի նման հաստատուն լինի, որովհետեւ ամեն բան նրա
վրայ է հիմնւում: Եւ շատ լաւ դիտեմ, օրինակ, որ դուք ծի-
ծաղելի էք համարում իմ սովորութիւններս, իմ արդ ու զար-
դըս, վերջապէս իմ մաքրասիրութիւնս, բայց այդ ամենը ա-
ռաջ է դալիս անձնապատուութեան զգացմունքիցս, պարտաւո-
րութեան զգացմունքից, այո, այո, պարտաւորութեան: Եւ ապ-
րում եմ գիւղում, մի խուլ անկիւնում, բայց իմ պատիւս գե-
տին չեմ ձգում, ես իմ անձնաւորութեանս մէջ լարգում եմ
մարդը:

— Երեցէք, Պաւէլ Պետրովիչ, — ասաց Բաղարովը, — ա-
հաւասիկ դուք լարգում էք ձեզ և նստած էք ձեռներդ ծալած.
Ինչ չա՛հ դրանից bien public-ի համար: Եթէ դուք ձեզ չար-
գէիք, դարձեալ միևնոջն բանը կ'անէիք:

Պա էլ Պետրովիչը սպրդնեց:

— Այդ բոլորովին ուրիշ խնդիր է: Եւ ալժամ բոլորովին
չեմ ուզում ձեզ բացատրել, թէ ինչո՞ւ եմ, ձեր ասածի պէս,
ձեռներս ծալած նստել: Ուզում եմ միայն ասել, որ արիստոկ-
րատութիւնը — պրինսիպ է, իսկ մեր ժամանակում առանց
պրինսիպի անբարոյական կամ դատարկապորտ մարդիկ կարող
են ապրել: Եւ այս բանն Արկաղիլին ասել եմ նրա դալու հէնց
միւս օրը, և ալժմս ասում եմ ձեզ: Այնպէս չէ Նիկալայ:

Նիկալայ Պետրովիչը գլխով արաւ:

— Արիստոկրատ, լիբերալ, պրոգրէս, պրինցիպ, — ասաց
Բաղարովը, — ինչքան օտար... և անօդուտ բռներ: Մեր ժողո-
վրդին ամենեկին պէտք չեն դրանք:

— Հապա ինչ է պէտք նրան ձեր կարծիքով: Զեղ որ ականջ

*) Բոլորովին հասարակական:

կախելու լինիք, մենք մարդկութիւնից դուրս, օրէնքներից դուրս ենք դանուում. Բայց այս պատմութեան լոգիկան պահանջում է...

— Մեր ինչին է այդ լոգիկան: Մենք առանց դրան էլ ենք եօլալ գնում:

— Ի՞նչպէս:

— Այնպէս: Կարծեմ որ դուք լոգիկալի կարիք չունիք, որպէս զի քաղցած ժամանակներդ հացի պատառը բերաններդ տանէք: Մեր ինչ բանն է այդ վերացական հասկացողութիւններով զրադուել:

Պաւէլ Պետրովիչը թափ տուաւ ձեռքը:

— Սրանից լետոյ ալլես ես ձեզ չեմ հասկանում: Դուք անպատում էք ռուս ժողովուրդը: Ձեմ հասկանում. թէ ինչպէս կարելի է պրինսիպներ, կանոններ չընդունել: Ուրեմն ալլ ես լանուն ինչ բանի էք գործում:

— Արդէն ձեզ ասել էի, հօրեղբայր, որ մենք հեղինակութիւն չենք ճանաչում, — մէջ մտաւ Արկադիչն:

— Մենք գործում ենք լանուն ան բանի, ինչ որ օգտակար ենք համարում, — ասաց Բաղարովը: — Ներկալումս ամենաօգտակարը ժխտելն է. մենք էլ ժխտում ենք:

— Ամեն բան:

— Ամեն բան:

— Ի՞նչ... ոչ միայն գեղարուեստը, բանաստեղծութիւնը... ալլ ե... սարսափելի է ասելը:

— Ամեն բան, — աննկարագրելի հանգստութեամբ կըրկնեց Բաղարովը:

Պաւէլ Պետրովիչն աչքերը սեեռեց նրան: Նա այս բանըս չէր սպասում, իսկ Արկադիչն գոհութիւնից մինչև անգամ կարմրեցաւ:

— Բայց սպասեցէք, — խօսեց Նիկալալ Պետրովիչը: — Դուք ամեն բան մերժում էք, ժխտում, կամ, աւելի ճիշդն ասած, ամեն բան խորտակում էք... Բայց չէ որ պէտք է նաև չինել:

— Այդ արդէն մեր գործը չէ... Նախ պէտք է տեղ բաց անել:

— Ժողովրդի ներկալ գրութիւնն այդ է պահանջում, — ծանրակշիռ կերպով աւելացրեց Արկադիչն, — մենք պարտաւոր ենք այդ պահանջները կատարել, իրաւունք չունենք մեր անձնական եսի գոհացմանն անձնատուր լինիլ:

Այս վերջին նախադասութիւնը, ըստ երևութին, Բաղա-

բովին դիւր չեկաւ, որովհետեւ դրանից փիլիսոփաութեան, այսինքն ուսմանտիղմի հոտ էր փչում, իսկ Բազարովը փիլիսոփաութիւնն էլ ուսմանտիղմ էր անուանում. բայց նա հարկ չհամարեց իւր երկտասարդ աշակերտի ասածը հերքելու:

— Ոչ, ոչ, — լանկարծական ուժգնութեամբ բացականչեց Պաւէլ Պետրովիչը. — չեմ ուզում հաւատալ թէ դուք, պարոններ, լաւ ճանաչելիս լինիք ոռւա ժողովուրդը, որ դուք նրա կարիքների, նրա ձգտումների ներկայացուցիչն էք: Ոչ, ոռւա ժողովուրդն այն չէ, ինչպէս որ դուք էք նրան նկարագրում: Նա սրբութեամբ պահում է աւանդութիւնները, նա — նահապետական է: Նա առանց հաւատի կարող չէ ապրել...:

— Դրա դէմ չեմ վիճի, — խօսքը կտրեց Բազարովը. — մինչև անգամ պատրաստ եմ համաձայնելու, որ այդ կտորի մէջ ձեր ասածն իրաւացի է:

— Իսկ եթէ իրաւացի է...

— Բայց և այնպէս այդ ոչինչ չի ապացուցանում:

— Արդարև ոչինչ չի ապացուցանում, — կրկնեց Արկադիյն փորձուած շահմատ խաղացողի մի այնպիսի վստահութեամբ, որը կարծես նախատեսել է հակառակորդի անելիք ըստ երևույթին վտանգաւոր խաղը, ուստի և ամենևին չի շքփոթում:

— Ինչպէս թէ ոչինչ չի ապացուցանում, — փրնթփնթաց ապշած Պաւէլ Պետրովիչը: — Ուրեմն դուք ձեր ժողովրդի դէմ էք դնում:

— Թէկո՛ւղ հէնց այդպէս էլ լինի, — բացականչեց Բազարովը: — Ժողովուրդը կարծում է թէ երբ որ ամպը զոռում է, այդ Եղիա մարգարէն է երկնքում կառքով ման գալիս: Ի՞նչ է: Համաձայնեմ նրան: Ասենք նա ոռւա է — իսկ ես, միթէ ևս ինքս ոռւա չեմ:

— Ոչ, այն բոլորից լետու, որ դուք այժմ ասացիք, դուք ոռւա չէք: Չեմ կարող ձեզ ոռւա համարել:

— Իմ պապս հողագործ էր, — գոռոզ հպարտութեամբ պատասխանեց Բազարովը: — Հէնց ձեր գիւղացիներից սրին ուզում էք հարցրէք. թէ մեզանից որին աւելի իրեն մօտիկ կը համարէ, ինձ թէ ձեզ, Դուք նոյն իսկ նրա հետը խօսել էլ չգիտէք:

— Իսկ դուք հետը խօսում էք և միևնույն ժամանակ էլ նրան արհամարհում:

—Ի՛նչ արած, քանի որ արժանի է արհամարհանքի։
Դուք կշտամբում էք իմ ուղղութիւնս, բայց ո՛վ է ձեզ ասում,
թէ արդ ուղղութիւնը պատահական է իմ մէջս, որ դա առաջ
չի եկել հէնց նորն ժողովրդական ոգուց, որի անունով արս-
քան մաքառում էք։

—Շատ բան, Խիստ հարկաւոր էին նիհիլիստները։

—Հարկաւոր են թէ հարկաւոր չեն— արդ մենք չվճռենք,
Հո դուք էլ ձեզ անօգուտ չէք համարում։

—Պարոններ, պարոններ, անձնաւորութեան մի կպչէք,

—բացականչեց Նիկալայ Պետրովիչը և վերկացաւ տեղից։

Պաւէլ Պետրովիչը ժպտաց ու ձեռքը եղբոր ուսին դնե-
լով, նրան նորից իւր տեղը նստացրեց։

—Անհանգիստ մի լինի,—ասաց նա։—Ես գլուխս չեմ
կորցնի հէնց արժանապատուութեան ան զգացմունքի շնոր-
հիւ, որ այսպէս սաստիկ ծաղրում է պարոն...պարոն բժիշկը։
Նւ ո՛վ գիտէ,—չարունակեց նա նորից Բազարովին դիմելով,—
գուցէ դուք կարծում էք, թէ ձեր վարդապետութիւնը մի նձր
բան է։ Իզուր էք կարծում։ Ձեր քարոզած մատերիալիզմը
(նիւթապաշտութիւնը) միշտ քարոզուել է և միշտ էլ անշօր
է եղել...։

—Դարձեալ օտար բառ,—ընդմիջեց Բազարովը։ Նա ըս-
կում էր չարանալ, և նրա դէմքը մի տեսակ պղնձի կոպիտ
դոն ստացաւ։—Նախ որ մենք ոչինչ չենք քարոզում, արդ-
պիսի սովորութիւն չունինք...։

—Հապա ի՛նչ է ձեր արածը։

—Ահս ինչ ենք անում։ Առաջները, դեռ շատ ժամանակ
չէ անցած, մենք ասում էինք, թէ մեր ծառայողները կա-
շառք են առնում, որ մեզանում ոչ ճանապարհ կալ, ոչ վա-
ճառականութիւն, ոչ կանոնաւոր դատաստան...։

—Իհարկէ, իհարկէ, դուք մերկացնողներ էք,—կարծեմ
այդպէս է ասուում։ Ձեր մերկացումների շատերին ես ինքս էլ
համաձայն եմ, բայց...։

—Իսկ լետու խելքի եկանք, որ մեր վէրքերի մասին խօ-
սելով, լոկ խօսելով բան չի դուրս գալ, որ դրա հետեանքը միմի-
տին վերացական անարգ դատողութիւններ են. տեսանք, որ մեր
խելքները, առաջաւոր համարուած մարդիկ ու մերկացնողներն
էլ բոլորովին բանի պէտք չեն, որ մենք դատարկ բաներով
ենք զբաղուալ, խօսում, դատում ենք մի ինչ որ արուեստի

մասին, անդիտակցական ստեղծագործութեան մասին, պարլամենտականութեան մասին, փաստաբանութեան մասին և էլ գրողը դիտէ թէ ինչ բաների մասին, մինչդէռ խնդիրը օրական հացի մասին է, մինչդեռ կոպիտ սնապաշտութիւնը մեղ խեղդում է. մեր բոլոր բաժնէաւոր ընկերութիւնները սնանկանում են միմիայն ազնիւ մարդկանց պակասութեան պատճառով, մինչդեռ հէնց ինքն ազատութիւնը, որի մասին հոգս է տանում կառավարութիւնը, հազիւ թէ մեղ մի օգուտ տալ, քանի որ մեր զիւղացին պատրաստ է ինքն իրանից գողանալու, որ խումի տալ:

—Կաւ,— ընդմիջեց Պաւէլ Պետրովիչը, —լաւ, այս բոլոր բաներին դուք համոզուել էք և վճուել էք ինքներդ ոչ մի բանի լրջօրէն ձեռք չտալ:

—Եւ վճուել ենք ոչ մի բանի ձեռք չտալ, — մտալլած կըրկնեց Բազարովը: Նա լանկարծ սկսաւ ինքն իւր վրայ նեղանալ, թէ ինչ հարկաւոր էր այդքան երկար բարակ խօսելու այս տղայի հետ:

—Եւ միայն հարցուել:

—Եւ հարցուել:

—Եւ այդ կոչում է նիհիլիզմ:

—Եւ այս կոչում է նիհիլիզմ, — կրկնեց Բազարովը այս անգամ մի առանձին լանդաճութեամբ:

Պաւէլ Պետրովիչը աչքերը թեթևակի կկոցեց:

—Այլպէս հն, — ասաց նա տնօրոքինակ հանդարտ ձայնով: — Նիհիլիզմը պէտք է ամէն ցաւի դարման անէ և դուք, դուք մեր ազատարարներս ու հերոսներս էք: Ել ինչի էք ուրեմն ուրիշներին, հէնց թէկուզ միևնույն մերկացնողներին, վատաբանում: Միթէ դուք էլ նրանց նման լոկ շողակրատելով չէք զբաղուած:

—Ուրիշ բան չգիտեմ, բայց մենք այդ պակասութիւնը չունինք, — ատամի արանքից ասաց Բազարովը:

—Ուրեմն ինչ էք անում, գործում, էք ինչէ: Թէ պատրաստում էք գործելու:

Բազարովը ոչինչ չպատասխանեց: Պաւէլ Պետրովիչը նստած տեղը ցնցուեց, բայց խկոյն էլ ինքն իրեն ղսպեց:

—Հմ...գործել... քանդել... շարունակեց նա: — Բայց ինչպէս էք քանդում, քանի որ մինչև անգամ չգիտեք, թէ ինչու էք քանդելու:

—Մենք քանդում ենք, որովհետև մենք ուժ ենք,—նը-
կատեց Արկադիին:

Պաւէլ Պետրովիչը նայեց իւր եղբոր որդուն ու քմքծի-
ծաղեց:

—Ուժը երբէք հաշիւ չի տալիս,—ասաց Արկադիին ու
շտկուեցաւ:

—Քշուառական,—վշտացած ձայնով ասաց Պաւէլ Պե-
տրովիչը. նա այլևս բուրբուրին անդօր էր իրեն զսպելու.— դոնէ
դու միտք անէիր, թէ Ռուսիայում ինչ բան ես պահպանում
քու այդ անարդ վարդապետութեամբդ: Ոչ, այս բանը հրեշ-
տակին էլ կարող է համբերութիւնից հանել: Ո՛րժ, վարե-
նի զալմուտի մէջ էլ, մոնղոլի մէջ էլ ուժ կալ—բայց ինչերիս
է այդ ուժը: Մեզ համար թանկ է քաղաքակրթութիւնը, այո,
այո, մեծարող պարոն, մեզ համար թանկ են նրա պտուղնե-
րը: Մի ասէք, թէ չնչին են այդ պտուղները. ամենավերջին
գրչակը, un barbouilleur*), վարձուած հասարակ դաշնակա-
հարը, որ մի հինգ կոպէկի համար պատրաստ է ամբողջ իրի-
կունը նուազել, նոյն իսկ դրանք աւելի օգտակար են, քան
թէ դուք, որովհետև նրանք քաղաքակրթութեան արդիւնք
են, և ոչ թէ մոնղոլական կոպիտ ուժի: Գուք ձեզ առաջաւոր
մարդիկ էք երեակայում, մինչդեռ ձեր տեղը զալմուտի սալ-
լակին է: Ո՛րժ, Յիւլեցէք վերջապէս, պարոն ուժովներ, որ ձեր
տեղը երկու ջուլտ մի կենտ է, իսկ միւսները—միլիօնաւոր
են և ձեզ չեն թօլ տալ, որ դուք ոտքի տակ առնէք նրանց
սրբազան հաւատալիքները, և կտրորեն ձեզ:

—Ձհանդամը: Տրորում են տրորեն,—ասաց Բազարովը:

—Միայն էն վաղ էր, որ էչը կաղ էր: Ձեր կարծածի չափ
մեր տեղն այնքան էլ քիչ չէ:

—Ի՛նչ, լիրաւի կարծում էք, թէ բոլոր ժողովրդի հախի-
ցը կգաք:

—Գիտէ՛ք, որ կաթիլը քար կծակէ,—պատասխանեց Բա-
զարովը:

—Լաւ, լաւ: Նախ համարեա դիւական դոռողութիւն,
իսկ ապա ծաւր: Ահա, ահա թէ ինչով է լափշտակում երիտա-
սարդութիւնը, ահա թէ ինչից են լաղթում երեխաների ան-
փորձ սրտերը: Ահաւասիկ, նախեցէք, դրանցից մէկը ձեր կող-

*) Անպէտք գրող. ծի:

քին է նստած. քիչ է մնում, որ նա ձեր առաջ մտ վառէ, ուրախացէք: (Արկաղիւն երեսը շուռ տուաւ ու մտալլեց) Եւ այս վարակը սաստիկ տարածուել է: Ինձ պատմում էին, թէ Հոռոմում մեր նկարիչները Վատիկան հոռ չեն կոխում: Ռաֆայէլին համարեա թէ անխելք են անուանում, որովհետեւ նա հեղինակութիւն է, իսկ իրենք դարչելու աստիճանի անդօր են և անպտուղ. երեակալութիւնները հո «Աղջիկը աղբիւրի մօտ»ից ամենեկին աւելի հեռուն չի դնում: Այդ էլ զոնէ մի բան լինի. Աղջկայ պատկերը հօ—մի անպիտան բան: Ձեր կարծիքով նրանք զոչաղ մարդիկ են, այնպէս չէ:

—Իմ կարծիքովս Ռաֆայէլը մի քոռ կոպէկ չարժի,—պատասխանեց Բազարովը.— դրանք հէնց իրանք էլ Ռաֆայէլից շատ լաւ չեն:

—Կեցցէք, կեցցէք: Լաւ լսիր, Արկաղիւ...ահմ ինչ ունով պէտք է խօսեն ներկայիս երիտասարդները: Եւ ինչպէս ձեր ետևից չգնան սրանք: Առաջները երիտասարդները պէտք է ուսանէին. չէին ուղում տղէտ անուն ունենան, ուստի և ակամալ աշխատում էին: Իսկ այժմս բաւական է ասեն՝ աշխարքիս վրայ ամեն բան էլ դատարկ բան է—պրծաւ դնաց, երիտասարդներն ուրախացան: Արդարեւ, առաջ նրանք պարզապէս անխելք էին, իսկ այժմս լանկարծ նիհիլիստ դարձան:

—Տեսնա՞ք, ահաւասիկ ձեր գոված արժանապատուութեան զգացմունքը դաւաճանեց ձեզ,—սառնութեամբ նկատեց Բազարովը, մինչդեռ Արկաղիւն ամբողջապէս կրակ կտրած աչքերից կայծեր էր ցալտում:—Մեր վէճը շատ հեռուն գնաց...: Կարծեմ աւելի լաւ է դադարեցնենք: Իսկ ես միմիայն այն ժամանակ պատրաստ կլինեմ համաձայնելու ձեզ հետ,—ասաց նա տեղիցը վերկենալով,—եթէ որ դուք կարող կլինիք մեր ներկայ, ընտանեկան կամ հասարակական կեանքից գէթ մէկ հաստատութեան անուն տալ, որ կատարեալ և անխնայ ժըխտման առիթ եղած չլինի:

—Այդպիսի միլիօնաւոր հաստատութիւնների անուն կը տամ,—բացականչեց Պաէլ Պետրովիչը,—միլիօնաւոր: Այ, թէ կուզ հէնց համայնքն օրինակ:

Մաղրական սառն ժպիտը ծոեց Բազարովի չրթունքները:

—Է՛հ, համայնքի մասին,—ասաց նա,—աւելի լաւ է ձեր եղբոր հետ խօսէք: Կարծիմ նա այժմս արդէն վորձով գիտէ, թէ ինչ բան է համայնքը, ինչ բան է հասարակական պա-

տասխանատուութիւնը՝ իւր անդամներից մէկի պարտազանցութեան համար, խումից ժուժկալելը և նման բաները:

—Նշտանիքը, վերջապէս ընտանիքը, որովհետև դա դուրսիւն ունի մեր գիւղականների մէջ,—կանչեց Պաւէլ Պետրովիչը:

—Կարծում եմ, որ հենց ձեզ համար էլ լաւ է, որ այդ խնդրի մանրամասնութիւնները չըննենք: Երևի լաւձ կլինիք «անտխաչներին» մասին: Բան եմ ասում, Պաւէլ Պետրովիչ, աւելի լաւ է, որ դուք ձեզ համար մտածելու մի երկու օր ժամանակ դնէք, որովհետև դժուար թէ այսպէս շուտով մի օրինակ գտնէք: Հաշուի առէք մեր բոլոր դասակարգերը և ամեն մէկի վրայ մէկ լաւ միտք արէք, իսկ մինչ այդ ես ու Արկադիին էլ...

—Ամեն բան ծաղր ու ծանակ կղարձնէք,—վրայ բերեց Պաւէլ Պետրովիչը:

—Ոչ, դորտ կկտրատենք: Գնանք, Արկադիյ, մնաք բարով, պարոններ:

Երկու ընկեր դուրս ելան: Եղբայրները մնացին մենակ և սկզբում միայն միմեանց երեսի էին նստում:

—Ահաւասիկ,—վերջապէս սկսեց Պաւէլ Պետրովիչը.— Ահա—մեր ներկայ երիտասարդութիւնը: Ահա քեզ—մեր ժառանգները:

—Ժառանգները,—թախծալի հառաչով կրկնեց Նիկալայ Պետրովիչը: Նա վէճի միջոցին բոլոր ժամանակը կարծես ասեղի վրայ նստած լինէր, և միմիայն թագուհի-թագուհի, հիւանդագին մտիկ էր տալիս Արկադիին:

—Գիտես ինչ միտս ընկաւ, եղբայր,—ասաց նա.—Մի անգամ լուսահոգի մալրիկի հետ վէճ ունեցայ—նա կանչվուտում էր, չէր ուզում ինձ ականջ դնել... Վերջապէս ես նրան ասացի, թէ դուք կարող չէք ինձ հասկանալ, թէ մենք երկու տարբեր սերունդների ենք պատկանում: Մալրիկս սաստիկ վիրաւորուեցաւ. իսկ ես մտածեցի՝—Քնչ արած: Դառն կապ է—բայց պէտք է կուլ տալ: Այժմ ահա հերթը մեզ է հասել, մեր ժառանգներն էլ կարող են մեզ ասել՝—դուք մեր սերնդի մարդ չէք, կուլտուէք հասկը:

—Դու արդէն չափազանց բարեհոգի ես ու համեստ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը.—ընդհակառակն ես համոզուած եմ, որ մենք աւելի իրաւացի ենք, քան թէ այս պարոնիկ-

ները, թէպէտ և զուցէ վոքը ինչ հնացած, vieilli *) լիզուով
ենք մեր մտքերը արտալայտում, և նրանց լանդուզն անձնա-
պատասանութիւնը չունենք...։ Եւ ի՞նչ փքուած բան է դարձել
այս ներկայ երիտասարդութիւնը։ Որ պատահեց դրանից մէ-
կին հարցրիր, որ գինուցն էք ուզում, կարմիր թէ սպիտակ,
«ես սովորութիւն ունիմ գերադասել կարմիրը» կպատասխա-
նէ նա բամբ ձախնով և դէմքի մի աչնպիսի արտալայտութեամբ,
որ կարծես թէ ալդ միջոցին ամբողջ տիեզերքը նրա բերա-
նին է մտիկ տալիս...։

— Էլ թէչ չէք ուզում, — հարցրեց Ֆենիչկան գլուխը դըռ-
նից ներս կոխելով՝ — մինչ ընդունարանում լսում էին վի-
ճողների ձայները, նա սիրտ չէր անում ներս մտնելու։

— Ոչ, կարող ես ասել, որ հեշտանող վերցնեն, — պա-
տասխանեց Նիկիայ Պետրովիչը և վեր կացաւ նրան բնդա-
ռաջ գնաց։ Պաւէլ Պետրովիչը կտրուկ ձևով ասաց «bon soir» *)
և իւր առանձնատեղեակը քաշուեցաւ։

XI

Այս ժամ լետով Նիկիայ Պետրովիչը պարտէզ, իւր սի-
րելի զովանոցը գնաց։ Տխուր մտքերը պաշարել էին նրան։
Առաջին անգամն էր, որ նա պարզ զգաց իւր որդուց անջատ-
ուած եղածը. զգում էր, որ օր օրի վերայ ալդ բանը պիտի մե-
ծանար։ Ուրեմն իզուր է եղել իւր, Պետերբուրգում եղած մի-
ջոցին, օրերով նորագոյն գրքերի վրայ ժամանակ անցկաց-
րածը, զուր է եղել երիտասարդների խօսակցութիւններին ա-
կանջ դնելը. զուր է ուրախանալիս եղել, որ նրանց կրակոտ
ձառերի միջոցին իւր կարծիքն էլ էր լայտնում. «Նղբալրս ա-
սում է, թէ մենք ենք իրաւացին», — մտածում էր նա, «և, ինք-
նասիրութիւնս մի կողմ դրած, հէնց ինձ էլ աչնպէս է թը-
ւում, թէ նրանք աւելի հեռու են ճշմարտութիւնից, քան թէ
մենք, բայց միևնոյն ժամանակ էլ զգում եմ, որ նրանք ունին
մի աչնպիսի բան, մի տեսակ առաւելութիւն, որ մենք չու-
նինք...։ Նրիտասարդութիւնն է ալդ. Ոչ, մենակ երիտասար-
դութիւնը չէ։ Արդեօք այդ առաւելութիւնն այս չէ, որ նրանց
մէջ աւելի քիչ աղալութեան հետք կալ քանթէ մեր մէջը։

*) Հին, հնացած. ծթ.

**) Գիշեր բարի. ծթ.

Նիկալայ Պետրովիչը գլուխը քաշ գցեց ու ձեռքով երե-
աք շփեց:

«Բայց մերժել բանաստեղծութիւնը», մտածեց նա նորից.
«չսիրել նկարչութիւնը, բնութիւնը...»:

Աւ նա չորս կողմը նայեցաւ կարծես կամենալով հասկա-
նալ, թէ ինչպէս կարելի էր բնութիւնը չսիրել: Իրիկնադէմ
էր, արեւը ծածկուել էր կաղամուխուտ անտառի ետեւը, որը
պարտիզից կէս վերստ հեռու էր գտնուում — նրա ստուերը ըն-
կած էր անշարժ դաշտերի վրայով և վերջ չուներ: Անտառի
երկարութեամբ մութ, նեղ ճանապարհով կիսաբշու գնում էր
մի գիւղացի սպիտակ ձի նստած — նա ամբողջովին երևում էր
պարզ կերպով, ամբողջովին՝ նույն իսկ ուսի կտրկատանն էլ
չնայելով, որ ստուերի միջովն էր գնում, հաճելի որոշ երևում
էին ձիու ոտի շարժումները: Արևի ճառագայթներն էլ մտել էին
անտառի մէջը և, թաւուտի միջից թափանցելով, կաղամախ-
ների բները մի աչնպիսի ջերմ լոյսով էին ողողել, որ եղննու
բների էին նմանե, իսկ թաւ տերեւները համարեա կապուտ
գոյն էին ստացել, իսկ անտառի վերեւ տարածուած էր բաց-
կապուտ երկինքը, որ վերջալոյսի ճառագայթներից թեթեւակի
կարմրել էր: Միծեւնակները թռչում էին բարձրում, քամին
բոլորովին խաղաղել էր, ուշի մնացած մեղունները ծուլաբար ու
քնատ ըզըռւմ էին լամպիկի ծաղիկների միջև. մշակները սիւ-
նի նման վլստում էին հեռու ձրուած, մեն-մենակ ճիւղի վե-
րեւ: «Ախ, ի՞նչ սքանչելի բան է, Աստուած իմ» մտածեց Նի-
կալայ Պետրովիչը և արդէն սկսել իւր սիրած ոտանաւորը ա-
սել, բայց լանկարծ միտքն ընկաւ Արկադիին, Stoff und Kraft-ը
և լոնց, բայց դարձեալ մնաց միևնույն տեղը, դարձեալ անձ-
նատուր եղաւ առանձնակի խոհերի վշտալի ու բ՛րկրատիթ
խաղին: Նա սիրում էր անուրջների մէջ ընկնել, գիւղական
կեանքը նրա մէջ այդ լատկութիւնն էր զարգացրել: Վաղուց
է, որ նա նոյնպէս երազում էր՝ քարվանսաբալում որդու ճա-
նապարհը պահելիս, իսկ այն օրուանից լետով արդէն փոփոխու-
թիւն էր եղել, արդէն պարզուել էին դեռ ես այն ժամանակ
անորոշ լարաբերութիւնները... և ինչպէս պարզուել: Իարձեալ
միտքն ընկաւ լուսահոգի կինը, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս
սովոր էր տեսնել երկար տարիներ, որպէս տնտես, բարի կին,
հապա որպէս նորատի աղջիկ՝ բարակ իրանով, անմեղ-փորձող
հայեացքով և պինդ հիւսած ծամը մանկական վզովն ընկած:

Յիշեց, թէ ինչպէս էր տեսել նրան առաջին անգամ, այն ժամանակ ինքը դեռ ուսանող էր: Նրան հանդիպել էր իւր բընական տան աստիճանների վրայ և լանկարծ նրան դարնուելով, շուռ էր եկել, որ ներողութիւն խնդրի. բայց ալքանս միայն կարողացել էր թոթովիլ. «pardon monsieur» *), իսկ աղջիկը գլուխը քաշ էր դրել, քմծիծաղել, և լանկարծ վախեցած փախել գնացել, իսկ աստիճանների պտուղքին արագութեամբ լեռ էր դարձել, նախել նրան, լուրջ կերպարանք առել ու կարմրել: Այնուհետև լիշեց իւր առաջին վեհերկոտ ալքելութիւնները, կէս-բերան խօսքերը, կէս-ժպիտները, և վարանունները, և թախիծը, և բորբոք սէրը, և վերջապէս այն հեղձուցիչ բերկրանքը... Ո՛ւր կորան այն ամենը, նրանք պսակուեցան, այնպէս բաղդաւոր էին, որ քշերին է վիճակուում երկրիս վրայ... «Բայց, — մտածում էր նա, — ալք քաղցր, առաջին ակնթարթները, ինչու չպէտք է դրանք լաւիտեան, չըմենոող կեանքով ապրէին»: Բայց նա չէր աշխատում իրեն համար պարզելու իւր մտքերը. սակայն զգում էր, որ կցանկար ալք երանաւէտ ժամանակների լիշատակը պահպանած լինել մի անլի զօրեղ բանով, քան թէ լոկ լիշողութիւնն էր կուզէր ի նորոյ շօշափել իւր Մարիայի մօտիկութիւնը, զգալ նրա ջերմութիւնն ու շունչը, և նրան արդէն թւում էր, որպէս թէ իւր վերելք...

— Նիկալայ Պետրովիչ, — մօտիկից լսուեց Ֆենիչկայի ձայնը, — Ո՛ւր էք:

— Նիկալայ Պետրովիչը ցնցուեց. նա ոչ զաւ զգաց, ոչ խղճի խալթ... Նա կարող չէր մինչև անգամ հնարաւոր համարել, որ իւր կնոջը և Ֆենիչկային համեմատեն միմեանց հետ. բայց նա վշտացաւ, որ Ֆենիչկան եկել էր իրեն փնտրելու: Ֆենիչկայի ձայնը միանգամից նրան լիշեցրեց իւր սպիտակ մազերը, իւր ծերութիւնը, իւր ներկան...:

Դիւթական աշխարհը, ուր նոր-նոր ոտք էր դրել, որն արդէն ծագում էր անցեալի միզամած ալքնների միջից, տատանուեց — և անհետացաւ:

— Ալտեղ եմ, — պատասխանեց նա, — գնա, կգամ: «Ահա ախի աղալութեան հետքերը», մտածեց նա: Ֆենիչկան լռելեայն մոտիկ տուաւ զովանոցի մէջն ու անհետացաւ. իսկ նա դարմա-

*) Ներեցէք, պարոն: Մթ.

ցած նկատեց, որ անուրջքներին անձնատուր լինելուց լետու արդէն գիշերը վրայ էր հասել: Չորս կողմն ամեն բան մթնել ու լուել էր, և Ֆենիչկալի դէմքը նրա աչքի առաջ խիստ դժգոյն ու մանր թուաց: Նա վերկացաւ և ուզում էր տուն դառնալ, բայց քնքշացած սիրտը չէր կարողանում հանգստանալ իւր կրծքի մէջ և նա սկսաւ ծանր-ծանր ման գալ պարտիզում մերթ մտախոհ կերպով ոտների տակը մտիկ տալով, մերթ աչքերը դէպի երկինք բարձրացնելով, ուր արդէն աստղերը պար առած իրար աչքախփիկ էին անում: Նա երկար ժամանակ, համարեա մինչև լոգնելը ման եկաւ, իսկ ներսը մի վրդովմունք, մի տեսակ օրոնող, անորոշ, տխուր վրդովմունք ամեննին չէր հանգստանում: Ոհ, ինչպէս պիտի ծիծաղէր ալժմըս Բազարովը, թէ որ գիտնար, թէ ինչ էր լինում իւր ներսըն ալն միջոցին: Ինքն Արկադիին էլ կշատապարտէր նրան: Իրա, քառասուն և չորս ամեալ մարդու, երկրաբան և գիւղատնտես մարդու աչքը արտասուքով էր լցւում, անառիթ արտասուքով. այս բանս Վիօլոնչելից հազար անգամ վատ էր:

Նիկալայ Պետրովիչը շարունակ ման էր գալիս և սիրտ չէր անում մտնելու տուն, այս խաղաղ ու խալտիկ բունը, որ իւր ըտր լուսաւոր պատահաններով սաստիկ հրապուրիչ կերպով նայում էր իրեն. նա չէր կարողանում անջատուել մթնից, պարտիզից, դէմքի վրայ թարմ օդի զգացողութիւնից, և այս թախիծից, այս վրդովմունքից...:

Ճանապարհի պտուղներն նրա առաջն ելաւ Պաւէլ Պետրովիչը:

—Այդ ինչ է եղել քեզ,—հարցրեց նա Նիկալայ Պետրովիչին.—երեսիդ գոյն չկայ, կարծես ուրուական լինիս. տկար ես. ինչու չես պառկում:

Նիկալայ Պետրովիչը կարճ խօսքով պատմեց իւր հոգեկան դրութիւնն ու հեռացաւ: Պաւէլ Պետրովիչը հասաւ մինչև պարտիզի ծայրը, նոյնպէս մտքի մէջ ընկաւ, և նոյնպէս աչքը դէպի երկինք բարձրացրեց: Բայց նրա գեղեցիկ, սև աչքերի մէջ, բացի աստղերի լոյսից ոչինչ չփալկեցաւ: Նա ոտմանտիկ ծնուած չէր և նրա պնձնասիրին լատուկ ցամաք և բուռն, Քրանսական ձևի մարդատեսաց հոգին չլիտէր, թէ ինչ բան է անուրջների մէջ ընկնելը...:

—Գիտես ինչ կալ,—նոյն գիշերը Բազարովն ասում էր Արկադիին.—Մի երևելի բան է միտքս ընկել. Հայրդ այսօր

ասում էր, թէ ձեր աչն նշանաւոր աղգականից նամակ է ըստացել: Հալրդ զնալու չէ. եկ վերկենանք մենք գնանք ***) , չէ որ այդ պարոնը քեզ էլ է կանչել: Հո տեսում ես, թէ թնչ եղանակ է այստեղ. իսկ մենք մի քիչ քամու կղիպչենք, քաղաքը կտեսնենք: Մի հինգ-վեց օր քաջ կգանք ու լետույ, դէհ, էլի դէպի տուն:

—Իսկ լետույ դու ալստեղ կղաս:

—Ոչ պէտք է հօրս գնամ: Գլխես, որ ***-ից երեսուն վերստ է. Վաղուց է նրան տեսած չեմ, մօրս էլ նոյնպէս, պէտք է փոքր ինչ ծերունիներին մխիթարել: Նրանք լաւ մարդիկ են, մանաւանդ հալրս—վերին աստիճանի տարօրինակ մարդ է: Ես նրանց մինու ճար որդին եմ:

—Նրանց մօտ երկար ես մնալու:

—Չեմ կարծում: Երեւի ձանձրալի կլինի:

—Իսկ վերադարձիդ մեզ չես հանդիպի:

—Չգիտեմ...տեսնեմ: Հը՛ թնչ կասես: Գնանք:

—Ինչո՞ւ չէ,—դանդաղաբար ասաց Արկաղին:

Նա իւր սրտում խիստ ուրախացաւ ընկերոջ արած առաջարկութեանը, բայց պարտք համարեց իւր զգացմունքը ծածկելու: Իդուր հո նիհիլիստ չէր:

Միւս օրը Արկաղին Բաղարովի հետ *** ուղեորուեցաւ: Մարլինօի երիտասարդութիւնը նրանց զնալու վրայ ցաւեցաւ. Գունիալան հո մինչև անգամ լաց եղաւ...սակալն ծերունիները սկսան մի փոքր թեթեւ շունչ առնել:

XII

Երկու բարեկամների գնացած *** քաղաքը զտնւում էր մի երիտասարդ նահանգապետի իշխանութեան տակ, որ առաջադէմ, բայց միևնոյն ժամանակ նաև բռնակալ մարդ էր, մի երևոյթ, որ սովորական է Ռուսիալում: Նա արդէն իսկ իւր կառավարութեան առաջին տարում կռուել էր ոչ միայն նահանգական ազնուականների պարագլխի հետ, որ գուարդալի մի պաշտօնաթող շտաբս ռոտմիստր էր, լիաբուժարանի տէր էր ու հիւրասէր մի մարդ, այլ և իւր սեփական պաշտօնեաների հետ: Այդ առթիւ ծագած կռիւներն անչաւ աստիճանի էին հասել, որ Պետերբուրգում մինիստրութիւնն անհրաժեշտ էր համարել լատուկ հաւստարմատար ուղարկել, որպէսզի գործը

տեղն ու տեղը քննէ: Իշխանութիւնն արդ բանի համար ընտրել էր Մատվէլ Իլլիչ Կալիազիւնին, այն Կալիազիւնի որդուն, որի խնամատարութեան տակ մի ժամանակ դտնուում էին երիտասարդ Կիրսանովները: Նա էլ էր «երիտասարդներից», այսինքն նոր էր քառասունն անցել, բայց արդէն պետական բարձր պաշտօնների աչք ունէր և կրճքի երկու կողմից էլ մի-մի ասեղ էր քաշ արել: Թէպէտ և արդ աստղերից մէկը, խոստովանք լինի, օտար պետութեան մի հասարակ աստղ էր: Սա էլ նահանգապետի նման, որին եկել էր քննելու, առաջադիմական էր համարուում և, թէպէտ արդէն նշանաւոր դիրք ունէր, բայց նման չէր նշանաւոր դիրք ունեցողների մեծամասնութեան: Իւր վրայ մեծ համարում ունէր. փառասիրութեանը սահման չկար, բայց իրեն պահում էր պարզ, ուրիշների հետ վարուում էր քաջալերական ձևով, ականջ էր դնում ներողամտաբար, և այնպէս բարեհոգի ծիծաղ ունէր, որ սկիզբները մինչև անգամ կարող էր «հրաշալի մարդ» թուալ: Սակայն կարևոր դէպքերում զիտէր նաև մարդկանց աչքը փոշի փչել: «Յուանդն անհրաժեշտ բան է», ասում էր արդպիսի դէպքում. «l'énergie est la première qualité d'un homme d'état.»*) բայց չնախելով դրան, նա միշտ էլ խարում էր և ամեն մի փոքր ինչ փորձուած պաշտօնեայ նստում էր նրա դիմին: Մատվէլ Իլլիչը մեծ լարդանքով էր խօսում Գիղզի 1) մասին, և այլստում էր բոլորին ու ամեն մէկին հասկացնել, որ ինքը հնապաշտ և յետամնաց մարդկանցից չէ, որ հասարակական կեանքի ոչ մի նշանաւոր երևոյթ անուշադիր չէ թողնում... բոլոր արդպիսի խօսքերը շատ լաւ ծանօթ էին նրան:

*) Եւանդը վարչական մարդու ամենակարևոր լատկութիւնն է: Ծ. Թ.

1) Ֆրանսուա Գիղզի (1787—1874 թ.) ֆրանսիական նշանաւոր պատմաբան և պետական գործիչ է և լատնի է նաև որպէս դոկտրինէօրների դպրոցի հիմնադրող (Ռօլիէ—Կոլլարի հետ միասին). այժմս դոկտրինէօր կոչուում են այն քաղաքական գործիչները, որոնք ճշտիւ հետևում են որոշապէս ձևակերպուած, բայց գործադրութեան համար անլարմար ծրագրի Գիղզիի գրուածքներից լատնի են «Սնդլլալի լեղալուխութեան պատմութիւնը», «Ֆրանսիական լեղալուխութեան պատմութիւնը» և ուրիշները: Ծ. Թ.

Նա մինչև անգամ, թէպէտ և անհոգ վեհութեամբ, հետևում էր ժամանակակից գրականութեան զարգացմանը. արնպէս ինչպէս որ հասակաւոր մարդը փողոցում հանդիպելով երեխաների խմբին, երբեմն գնում է նրանց ետեւից. Իսկպէս Մատիէլ Իլլիչը շատ չէր զանազանւում Ալէքսանդրեան շրջանի արնպետական գործիչներին, որոնք պատրաստուելով Պետերբուրգում ապրող արիւն Սվեչինայի տունը երեկոյթի գնալ, առաւօտեան Կոնդիլիակի^{*)} գրուածքից մի-մի բան էին կարդում. Բայց սրա ձեւերը ուրիշ, աւելի ժամանակակից էին. Նա ճարպիկ պաշտական էր, խիստ խորամանկ մարդ, և ուրիշ ոչինչ. ոչ մի գործի խելքը չէր հասնում, խելք չունէր. հապա գիտէր միայն իւր սեպհական գործերը առաջ տանել—ալլաւեղ արդէն ոչ ոք կարող չէր նրա գլխին նստել. չէր հէնց գլխաւորն էլ արդ էր:

Մատիէլ Իլլիչը Արկադիին ընդունեց լուսամիտ պաշտօնեայի լատուկ բարեհոգութեամբ, աւելին ասենք, ծիծաղերես. Սակալն զարմացաւ, երբ իմացաւ, որ հրաւիրած ազգականները գիւղումն էին մնացել. «Քու հալրիկդ միշտ տարօրինակ մարդ է եղել» նկատեց նա իւր փառահեղ խալաթի փնջերը ձեռքի մէջ վեր-վեր ձգելով, և լանկարծ, դառնալով դէպի մի ծառայողի, որը ամենայն խնամքով մեր էր գցած իւր նշանադրեստի բոլոր կոճակները, մտախոհ կերպարանքով կանչեց՝ «Ինչ կալ»: Նրիտասարդը, որի շրթունքները երկար ժամանակ լուռ մնալուց արդէր իրար էին կպած, տեղիցը վերկացաւ և վարանմամբ իւր մեծաւորի երեսին նայեց. Սակալն Մատիէլ Իլլիչը ստորադրեալին վարանման մէջ ձգելուց լետոյ ալ ևս նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց. Մեր մեծաւորները սովորաբար սիրում են իրենց ստորադրեալներին շկլացնել, արդ նպատակին հասնելու համար նրանց գործ դրած միջոցները բաւական տարբեր են. ի միջի ալլոց հետևեալ միջոցը բաւական գործածական է, «is quite a favorite», ինչպէս ասում են անգլիացիք՝—մեծաւորը լանկարծ դադարում է ամենահասարակ բաներն անգամ հասկանալուց, զօրով խուլ է ձևանում. Նա, օրինակի համար, կ'հարցնէ, թէ ինչ օր է այսօր:

¹⁾ Էտիէն Կոնդիլիակը (1715—1780 թ.) Ֆրանսիացի փիլիսոփայ և քաղաքատնտես էր. Մ. Թ.

—Նրան լարզանքով կ'զեկուցանեն՝ «այսօր ուրբաթ է
Ձերդ թ... թ... թիւն»:

—Հը՞. ինչ. ինչ է. ինչ էք ասում,—լարուած դրու-
թեամբ կրկնում է նա:

—Ուրբաթ է, Ձերդ...թիւն:

—Ի՞նչպէս, ինչ. ինչ բան է ուրբաթը, ի՞նչ ուրբաթ:

—Ուրբաթը, Ձերդ... թ... թթթ... թ...թիւն, շաբաթ-
ուայ օր է:

—Ի՞նչ է, չլինի ուզում ես ինձ դաս տալ:

Մատվէլ Իլիչը, թէպէտ ազատամիտ էլ համարուէր, բայց՝
և այնպէս հո մեծաւոր էր:

—Քեզ խորհուրդ եմ տալիս, բարեկամ, որ նահանգա-
պետին ալցեւութեան դնաս,—ասաց նա Արկաղիլին, — հասկա-
նում ես իհարկէ, այս խորհուրդը որ տալիս եմ ոչ թէ այն
պատճառով է, որ հետևող եմ հին հասկացողութիւններին թէ
անհրաժեշտ է խոնարութեան համար իշխանաւորներին զը-
նալ, հասկա պարզապէս այն պատճառով, որ նահանգապետը
լաւ մարդ է. մանաւանդ որ երևի կ'ցանկանաս այստեղի հա-
սարակութեան հետ էլ ծանօթանալ... Յուսամ, թէ հասարա-
կութիւնից փախչող չես: Իսկ նա վաղը չէ միւս օրը մեծ պա-
րանանդւս է կազմելու:

—Դուք էլ լինելու էք այդ պարանանդէսին,—հարցրեց
Արկաղին:

—Պարանանդէսը իմ պատուին է կազմել,—համարեա թէ
վշտացած ասաց Մատվէլ Իլիչը.— Պարծում ես:

—Պարու՞մ եմ, բայց վատ:

—Իդնուր. Այստեղ սիրուն կանաչ-աղջկերք կան. համ
էլ ամօթ է, որ երիտասարդը պարել չիմանայ: Դարձեալ այս
որ ասում եմ ամենևին չկարծես, թէ հասկացողութիւնների
հետևանք է ասածս. ամենևին չեմ կարծում, թէ մարդու խել-
քը ոտներում է, բայց բարոնականութիւնը ծիծաղելի բան է,
il a fait son temps ¹⁾).

—Ես բոլորովին բարոնականութիւնից չէ որ...

—Քեզ կ'ծանօթացնեմ այստեղի տիկիւնների հետ, քեզ

¹⁾ Դա իւր ժամանակն անց է կացրել, դրա դարն ան-
ցել է: Մ. Թ.

կ'առնեմ իմ թևերս և թռչեմ և ինքնագործ կերպով ժպտացի: Ձեռքս մրսի, չէ՛:

Ներս մտաւ ծառան ու լալտնեց, որ եկել է դատական պալատի նախագահը, կնճռապատ շրթունքներով ու քաղցրահայեաց մի ծերով, որ ընութեան սաստիկ սիրահար էր, մահաւանդ ամառուան, երբ որ, նրա խօսքով «ամեն մի մեղուիկ, ամեն մի ծաղկեկից վերցնում է հարկիկ...»: Արկաղիցն դուրս եկաւ:

—Նա Բաղարովին դտաւ իրենց իջևանած պանդոկում, և երկար համոզում էր, որ նահանգապետին գնան:

—Ի՛նչ արած,—ասաց վերջապէս Բաղարովը, ջուրն ընկնողն անձրեկից չի վախիլ: Որ եկել ենք կալուածատէրերին տեսնելու, դէ՛ ուրեմն, մի լաւ տեսնենք:

Նահանգապետը երկտասարդներին սիրալիւր ընդունելութիւն ցոյց տուաւ, բայց նրանց չնստացրեց ու ինքն էլ չնըստաւ: Նա շարունակ շտապում էր ու անհանդիստ չքութեան մէջ էր. առաւօտից հագնում էր նեղ համադրեստն ու կապում չափազանց պինդ քաշած փողպատը, ոչ կուշտ ուտում էր ոչ կուշտ խմում, շարունակ կարգադրութիւններ անում: Նահանգում նրա անունը Բուրդալու էին դրել ոչթէ լալտնի Ֆրանսիացի քարոզչի անունով ¹⁾ հապա ուսերէն բուրդա բառից, որ նշանակում է պղտոր հեղուկ, մրուր:

—Նահանգապետը Կիրասնովին ու Բաղարովին իւր պարահանդէսին հրաւիրեց, իսկ երկու բոլորէ անց նորից կրկնեց հրաւէրը՝ համարելով թէ նրանք եղբայր են, և Կալսարով առնուանեց:

Նահանգապետի մօտից դուրս գալով նրանք տուն էին դառնում, որ լանկարծ ալդտեղով անցող կառքի միջից դուրս թռաւ փոքր հասակով, Սլաւիանաֆիլի ²⁾ զգեստ հագած մի մարդ ու «Սեգենիլ Վասիլի» ասելով վազեց դէպի Բաղարովը:

¹⁾ Լուի Բուրդալուն (1632—1704 թ.), Ֆրանսիացի ճիզուկաւ լալտնի քարոզիչ է:

²⁾ Սլաւիանաֆիլութիւնը ծագեցաւ անցեալ դարու երեսնական թուականներին և ծաղկեցաւ 40 և 50 ական թուականներին: Երկու խօսքով կարելի չէ դրա մասին գաղափար տալ. դա իսկապէս ազգայնական (ռուսական) գաղափարն է պաշտպանում բայց լիովին ինքնուրոյն կերպով, և բողոքում օտարամոլութեան, այս դէպքում եւրոպական հասարակական,

—Հը՛, այս դձև ես, հերր *) Սիտնիկով, —ասաց Բազարովը իւր ճանապարհը շարունակելով. —ո՛ր խաչից:

—Յրեակալեցէք, բոլորովին պատահաբար, —պատասխանեց սա և դէպի կառքը շուռ գալով մի հինգ անգամ ձեռքով արաւ ու կանչեց. —ետեներիցս արի, ետեներիցս. —Հալրս այստեղ գործ ունէր, —շարունակեց նա առուի վրայից թռչելով, —ինձ խնդրեց, որ... Ասօր լսեցի եկել էք և արդէն ձեր ընակարանն էլ գնացել եմ... (Յիրաւի, երկու ջարեկամ իրենց հիւրանոցը վերադառնալուց լետու գտան Սիտնիկովի այցետոմսը, երկու ծալրը ծալած, և վրան զրած նրա անունը՝ մէկ երեսին Ֆրանսերէն, իսկ միւս երեսին՝ սլաւեաներէն ծաղկատառերով): Յուսամ, թէ նահանգապետի մօտից չէ եկածներդ:

—Մի լուսաք, ուղղակի արտեղից ենք գալիս:

—Հա՛, ուրեմն ես էլ կ'գնամ... Սեզենիլ Վասիլլիչ, ծանօթացրէք ինձ ձեր... նրանց հետ...:

—Սիտնիկով, Վիրսանով, —մրթմրթաց Բազարովն առանց կանգ առնելու:

—Ինձ համար շնորհք եմ համարում, —շարունակեց Սիտնիկովը, կողէ-կող առաջ անցնելով, քաղցր ժպտալով և շտապով հանելով իւր չափազանց ընտիր ու վալելուչ ձեռնոցը:

—Խիստ շատ լսել էի... մե Սեզենիլ Վասիլլիչի վաղուցուայ ծանօթը և կարող եմ ասել, աշակերտն եմ: Իմ վերածնութիւնս նրան եմ պարտական:

Արկաղիլն մտիկ տուաւ Բազարովի աշակերտին: Նրա լպտտած դէմքի մանր, սակալն հաճելի գծազրութեան վրայ անհանգիստ ու բուրթ արտալատութիւն էր երևում. փոքրիկ, ասես թէ ներս սեղմած աչքերը լառած ու անհանգիստ էին մտիկ տալիս, նրա ծիծաղն էլ անհանգիստ էր — ծիծաղը կարճ էր ու չոր-չոր:

—Ա՛հաւատաք, —շարունակեց նա, —առաջին անգամ որ Սեզենիլ Վասիլլիչը իմ ներկալութեամբ չասաց, թէ չպէտք

*) Պարոն Մթ.

կրօնական, տնտեսական և քաղաքական կազմի դէմ. նըրա նպատակն էր ուսումնասիրել բուն աղգալին հաւատալիքները, գաղափարները, ստեղծագործութիւնները... և կռուել արնամենի դէմ, որ օտար է, որովհետև դերակշիռ և համաշխարհակին առաջնութիւն ունի ռուսականը: Մ. Թ.

է հեղինակութիւն ճանաչել, ահպէս ողորուեցաւ...կարծես աչքս միանգամից բացուեցաւ: Ահաւասիկ, միտք էի անում, վերջապէս գտաւ մի մարդ: Ի դէպ, Եւզեմիլ Վասիլիեհի, անպատճառ պէտք է դուք այստեղ այցելէք մի տիկնոջ, որը կատարելապէս կարող է ըմբռնել ձեզ և որի համար ձեր այցելութիւնը կատարեալ տօն կ'լինի. երևի նրա անունը լսած էլ կ'լինիք:

—Խոնջ կին է,—ականջ հարցրեց Բաղարովը:

—Վուկչինան, Eudoxie, Եւզեմիլի Կուկչինա—Մի զարմանալի կին է, émancipée *) բառի բուն իմաստով, առաջաւոր մի կին է: Գիտես թնջ կալ: Սկէք բոլորս էլ վերկենանք, զնանք նրան: Նրա բնակարանն այստեղից երկու քալ է: Այստեղ էլ կ'նախաճաչենք: Հո դեռ չէք նախաճաչել:

—Ոչ:

—Շատ էլ լաւ էք արել: Նա, դիտէք, ամուսնուց ջոկ է ապրում, ոչոքից կախում չունի:

—Սիրուն կին է,—ընդմիջեց Բաղարովը:

—Ը...չէ, կարելի չէ ասել:

—Էլ ուր էք մեզ վեր առել, նրա մօտ տանում:

—Ահ, հանաքչի, հանաքչի...Նա մեզ համար շամպայն գինի կ'րանալ:

—Հա, Իսկոյն երևում է դործնական մարդ եղածդ: Ի դէպ, ձեր հալը դարձեալ կապալի գործերով է պարապում:

—Այո,—շտապով պատասխանեց Սիմոնիկովն ու ճշալով ծիծաղեցաւ: Հը՞: Խոնջ էք ասում:

—Չգիտեմ ճշմարիտ:

—Ուղում էիր մարդիկ տեսնես, զնն էլի,—ցած ձայնով ասաց Արկադիին:

—Հապա դուք, պ. Կիրսանով,—վրալ բերեց Սիմոնիկովը:—Դուք էլ համեցէք, առանց ձեզ կարելի չէ:

—Այս ինչպէս կ'լինի, որ լանկարծ բոլորս միանգամից վրալ թափուենք:

—Վնաս չունի: Կուկչինան—պատուական կին է:

—Շամպայն գինի կ'լինի—հարցրեց Բաղարովը:

*) Էմանսիպացիա—իրաւունքների հաւասարացումն. իրաւազուրկի իրաւունք ձեռք բերելը: Կրթուած, աչքը բացուած: Մ. Ք.

—Յրեք շիշ կ'լինի,—բացականչեց Սիտնիկովը։—Դրան
 և քաշխաւոր եմ:

—Ինչո՞վ:

—Սեպհական գլխովս:

—Աւելի լաւ կ'լինէր՝ հօրդ քսակովը: Սակայն գնանք:

XIII

Մոսկուայի տների ձևով չինած փոքրիկ աղնուականա-
 կան տնակը, որտեղ ապրում էր Աւդոտիա Նիկիտիչնա (կամ
 Նւդոտիա) Կուկչինան, դտնուում էր *** քաղաքի նոր ալրուած
 փողոցներից մէկում. յալտնի է, որ Ռուսիայի նահանգական
 քաղաքները հինգ տարին մի անգամ ալրուում են: Դրանը ծուռ
 խփած այցետոմսի վերևը երևում էր զանգակի կոթը, իսկ նա-
 խասենեակում նրանց դիմաւորեց գլխազարդ ծածկած մի կին,
 որ ոչ աղախնի էր նման, ոչ էլ ընկերակցուհու—յալտնի նը-
 շան տանտիկնոջ առաջադիմական ձգտումների: Սիտնիկովը
 հարցրեց, թէ Աւդոտիա Նիկիտիչնան տանն է:

—Victor, դո՞ւք էք,—կողքի սենեակից լսուեց մի բարակ
 ձայն:—Ներս մտէք:

Գլխազարդ ունեցող կինն իսկոյն անհետացաւ:

—Մենակ չեմ,—ասաց Սիտնիկովը ճարպիկութեամբ հա-
 նելով վրայի շորը, որի տակ չուխի կամ երկար վերարկուի
 պէս մի բան երևաց, և Արկադիլի ու Բազարովի վրայ համար-
 ձակ հայեացք ձգելով:

—Մէկ բան է,—պատասխանեց ձայնը: Entrez *)

Երիտասարդները ներս մտան: Նրանց մտած սենեակն
 աւելի առանձնասենեակի էր նմանում, քան թէ ընդունարա-
 նի: Թղթերը, նամակները, հաստ ամսազրների համարները,
 որոնց թերթերը մեծ մասամբ կտրուած չէին, թափթփած,
 վեր էին ընկած փոշոտ սեղանի վրայ. ամեն տեղ երևում էին
 քաշած ծխախոտի սպիտակ մնացորդները: Կաշուէ գահաւորա-
 կի վրայ կէս պառկած էր դեռ ևս նորատի, շիկահեր, մազերը
 փոքր ինչ շաղ ընկած մի կին, հագին՝ մետաքսեայ, ոչ այն-
 քան մաքուր զգեստ, կարծիկ բազուկներին խոշոր ապարան-
 ջաններ, գլխին հիւսկէն ծածկոց ձգած: Նա վեր կացաւ գահա-

*) Ներս մտէք: Մ. Թ.

ւորակի վրայից և անհողաբար իւր ուսերին քաշելով սպիտակ աքիսի մորթուց կարած, բայց արդէն դեղնած մուշտակը, ծով ծով ասաց. (Բարով, Victor, և սեղմեց Սիտնիկովի ձեռքը:

—Բազարով, Կիրսանով,—Բազարովին նմանելով կտրուկ կերպով ասած Սիտնիկովը:

—Բարով եկաք,—պատասխանեց Կուկչինան, և Բազարովի վրայ սենեկով իւր կյոր աչքերը, որոնց արանքում կարծես որբացած մնացել էր փոքրիկ կարմիր, ծալրը դէպի վեր ցցուած քիթը, աւելացրեց. «ես ձեզ գիտեմ,—և նրա ձեռքն էլ սեղմեց:

Բազարովը նոթերը կիտեց. Այդ լուսաւորուած կնոջ փոքրիկ ու դժուած կերպարանքի մէջ ոչ մի ալլանդակ բան չկար. միայն դէմքի արտայայտութիւնը անհաճու տպաւորութիւն էր դործում. Մարդս ահամալ ուզում էր հարցնել. «Ի՞նչ է, քաղցած ես: Կամ ձանձրանում ես: Կամ քաշում ես: Ի՞նչ ես լարուած մնացել»: Նա էլ, Սիտնիկովի նման, շարունակ անհանդիստ դրութեան մէջ էր. Նրա խօսածն ու շարժումները շատ ազատ էին, բայց և միևնույն ժամանակ էլ անհամարձակ. հաւանօրէն նա ինքն իրան մի բարեհոգի ու պարզ էակ էր համարում, մինչդեռ ինչ ուզում է անէր, միշտ արնայէս կ'թուար, թէ հէնց այդ բանն է, որ նա չէր ուզում անել. նրա ամեն արածն էլ սարքովի էր դուրս դալիս, այսինքն պարզ, բնական չէր լինում:

—Այո, այո, Բազարով, ես ձեզ գիտեմ,—կրկնեց նա. (շատ գաւառացի և Մոսկուալի կանանց նման նա էլ սովորութիւն էր արել հենց ծանօթութեան առաջին օրից տղամարդկանց ազգանունով կոչել):—Սիգար կ'ուզէք:

—Սիգարը ի՞րա կարգին,—վրայ բերեց Սիտնիկովը, որ արդէն վէր էր ընկել բազկաթոռների վրայ ու ոտները վերե բարձրացրել.—մեզ նախաճաշիկ տւա: Սաստիկ քաղցած ենք. ասացէք որ մի շիշ էլ շամպայն գինի հանեն:

—Հեշտասէր,—ասաց Սւդոկսիան և ծիծաղեցաւ. Միծաղելիս ատամների վրայ երևում էին նրա վերևի ընդերքը:

—Սա կեանքի լարմարութիւնները սիրում եմ,—իւր խօսքերին կարևորութիւն տալով արտասանեց Սիտնիկովը.—Այդ բանն ինձ ազատամիտ լինելու արգելք չի:

—Ոչ, արգելք է, արգելք է,—բացականչեց Սւդոկսիան, և սպասուհիներից մէկին պատուիրեց, որ նախաճաշի ու մէկ

էլ շամպայն գինու պատրաստութիւն տեսնէ:—Դձուք ինչ էք կարծում,—ասաց նա Բաղարովին դիմելով:—Հաւատացած եմ, որ ինձ համակարծիք կ'լինիք:

—Ասեմք, չէ,—պատասխանեց Բաղարովը:—Մի կտոր միսը լաւ է, քան մի պտտաւ հացը, նոյն իսկ քիմրական տեսակէտով:

—Քիմրալով պարագում էք: Այդ իմ ամենասիրած բանն է: Մինչև անգամ ես մի մազտաք եմ հնարել:

—Մաղտնք, դձուք:

—Այո, ես: Եւ գիտէք ինչ նպատակով: խումածիկներ, գլուխներ շինելու նպատակով, որպէսդի չկտորուին: Ախր ես էլ գործնական մարդ եմ: Բայց դեռ չեմ վերջացրել: Դեռ պէտք է Լիբիխի գրուածքը կարդալ: Ի դէպ, МОСКОВСКІЯ ВѢДОМОСТИ-ի մէջ կարդացիք կանանց աշխատանքի մասին Կիսլիակովի լօղուածը: Խնդրեմ կարդացէք: Կանանց խնդիրը հո ձեզ հետաքրքրում է: Նոյնպէս և ուսումնարանները: Ինչո՞վ է պարագում ձեր բարեկամը: Ի՞նչ է նրա անունը:

Տիկին Կուկչինյան իրար ետևից քնքշացած անհոգութեամբ բաց էր թողնում իւր հարցերը և պատասխանի չէր սպասում. երես առած երեխաներն իրենց դպրակների հետ այդպէս են խօսում:

—Իմ անունս Արկաղիլ Նիկալալիչ Կիրսանով է,—ասաց Արկաղիլն,—և ոչ մի գործով չեմ պարագում:

Եւ շուրջիս ծիծաղեց:

—Այդ լաւ բան է: Ի՞նչ է, դուք չէք ծխում: Վիկտոր, հո գիտէք որ ձեր վրայ նեղացած եմ:

—Ի՞նչ բանի համար:

—Ատում են, որ դարձեալ սկսել էք Ժորժ-Սանդին ¹⁾ գովել: Ի՞նչ է դա՝ մի լետ մնացած կին և ուրիշ ոչինչ: Ինչպէս կարելի է նրան էմերսոնին ²⁾ հաւասարեցնել: Ոչ մի զաղափար չէ արտալալտում ոչ դաստիարակութեան մասին, ոչ մարդակազմութեան, և ոչ մի ուրիշ բանի մասին: Հաւատացած եմ, որ նա սաղմաբանութեան անունն անգամ լսած

¹⁾ Ժորժ-Ջանդ լալտնի Ֆրանսիացի վիպասանուհի Ամանտինէ Դիւպէնի (1807 թ. ծն.) կեղծ անունն է:

²⁾ Ռալֆ Էմերսոնը (1803—1882 թ.) ամերիկացի լալտնի փիլիսոփայ և բանաստեղծ է: Մ. Թ.

չէ, իսկ մեր ժամանակում—առանց դրան կարելի բան է: (Սուրբոկսիան մինչև անգամ ձեռներով զարմացման շարժում արաւ): Ախ, ինչ հրաշալի յօդուած էր գրել Սլիսկիչն արդ մասին: Հանձարաւոր պարոն է: (Սուրբոկսիան շարունակ «մարդ» ասելու տեղ «պարոն» էր ասում): Բազարով, եկէք կողքիս զահաւորակի վրայ նստէք: Գուցէ չգիտէք, որ ես սաստիկ վախենում եմ ձեզանից:

—Ինչո՞ւ: Հետաքրքրական է իմանալ:

—Դուք վտանգաւոր պարոն էք. խիստ կրիտիկոս էք: Ախ, Ատուած իմ, մինչև անգամ ծիծաղս է զալիս. այնպէս եմ խուսում, կարծես թէ լետ ընկած անկիւնի կալուածատէր կանանցից լինիմ: Ասենք հէնց կալուածատէր էլ եմ: Կալուածքս կառավարողը ես ինքս եմ և, երեակայեցէք, իմ գիւղապետ Սրոֆէյը—զարմանալի տիպար է, տեղն ու տեղը Կուպերի Պատֆայնդեր ¹⁾. մի առանձին բնական բան կալ մէջը: Ես մշտական բնակութիւնս արտեղ եմ հասնատել: Անտանելի քաղաք է, այնպէս չէ: Բայց ինչ արած:

—Բաղաք է քաղաքի պէս, —անտարբեր կերպով նկատեց Բազարովը:

—Բայց և այնպէս այստեղ մանր-մունր շահեր են միմիայն, և արդ է սարսափելին: Առաջները ձեռները Մոսկուլումն էի ապրում...բայց այժմս այնտեղ է ապրում իմ կողակիցս, Մսիօ Կուկչինը: Հէնց Մոսկուան ինքն էլ...չգիտեմ ճշմարիտ—դարձեալ այն չէ: Ուզում եմ արտասահման գնալ. անցեալ տարի արդէն բոլորովին պատրաստուել էին ճանապարհ ընկնելու:

—Իհարկէ Պարիզ, —հարցրեց Բազարովը:

—Պարիզ և Հալդելբերգ:

—Ինչո՞ւ Հալդելբերգ:

—Ախր Բունզէնն այնտեղ է:

Բազարովը ոչ մի բան չգտաւ ասելու:

—Pierre Սապոժնիկովը...ճանաչում էք:

—Ոչ, չեմ ճանաչում:

¹⁾ ձեմս Ֆենիմոր Կուպեր (1789—1851 թ.) ամերիկացի հռչակաւոր վիպասան է և գլխաւորապէս գրում էր Ամերիկայի վայրենիների և ուլկիանոսի կեանքից: Պատանիների համար շատ գրաւիչ գրող է: Մ. Թ.

—Ի՛նչ էք ասում, Pierre Սապրոֆնիկովին...նա դեռ այժմ
 ժրս էլ շարունակ Լեղիա Խոստատովի տունն է դնում-զալիս:

—Ես այդ տիկնոջն էլ չեմ ճանաչում:

—Այդ պարոնն լանձն էր առել ինձ ուղեկցելու: Փառք
 Աստուծոյ, այժմ ազատ եմ, զաւակ չունիմ...Այս ի՛նչ ասացի
 —փառք Աստուծոյ: Էհ, ասե՛նք մէկ բան է:

Նւրդկսիան ծխախոտից դեղնած մատներով ոլորեց, զը-
 լանակ շինեց, լեղուով թուղթը թրջեց, ծծեց ու կպցրեց: Ափ-
 սէն ձեռին ներս մտաւ աղախինը:

—Ըհ՛ր՛, այս էլ նախաճաշիկը: Կ'ուզէ՞ք: Վիկտոր, հապա
 շիշը բացէ՛ք. այդ ձեր գործն է:

—Այո, այո, իմ գործն է,—մըթմըթաց Սիտնիկովը և
 դարձեալ ճշածալն ծիծաղեց:

—Աստեղ սիրուն կանալք կան, —հարցրեց Բազարովը
 երրորդ բաժակը խմելիս:

—Կան,—պատասխանեց Նւրդկսիան,—բայց ըստրն էլ
 դատարկամիտ բաներ են: Օրինակ mon amie *) Օդինցովան—
 վատ չէ: Միայն ափսոս որ մի քիչ անուներ...Ասե՛նք այդ նը-
 շանակութիւն չունէր, բայց ոչ մի ազատ հալեացք, ոչ մի ըն-
 դարձակ...ի՛ք: Պէտք է ամբողջ կրթութեան սիստէմը փոխել:
 Եւ այդ մասին արդէն մտածել եմ. մեր կանալք խիստ վատ
 են դաստիարակուած:

—Իրանց ոչինչ կարելի չէ անել,—վրայ բերեց Սիտնի-
 կովը: —Պէտք է նրանց արհամարհել, և ես արհամարհում եմ
 նրանց լիովին ու կատարելապէս: (Արհամարհելու հնարաւո-
 րութիւնն ու իւր արհամարհանքն արտալատելը Սիտնիկովի
 ամենահաճելի զգացողութիւնն էր. նա մանաւանդ լարձակուած
 էր կանանց վրայ առանց կասկած տանելու), որ մի քանի ամ-
 սից լետոյ ինքը պէտք է իւր կնոջ առաջ սողալու հարկին
 մէջ լինէր, լոկ ալն պատճառով, որ կինը ի ծնէ իշխան Գուր-
 դոլէօսովի աղջիկ էր): Նրանց և ոչ մէկը կարող կ'լինէր մեր
 խօսակցութիւնը ըմբռնել. նրանցից և ոչ մէկն արժէ, որ մենք,
 լրջամիտ տղամարդիկս, նրանց վրայ խօսենք:

—Եւ հարկաւոր էլ չէ, որ նրանք մեր խօսակցութիւնը
 հասկանան,—ասաց Բազարովը:

—Այդ ո՛ւմ մասին էք խօսում, — մէջ մտաւ Նւրդկսիան:

*) Բարեկամ:

— Միրուն կանանց մասին:

— Ի՞նչ, Ուրեմն դուք Պրուդոնին ¹⁾ համակարծիք էք: Բազարովն ամբարտաւանութեամբ շտկուեցաւ:

— Սա ոչ ոքին համակարծիք չեմ: Սա իմ կարծիքներս ունիմ:

— Կորչի հեղինակութիւնը, — դուաց Միտնիկովն ուրախացած, որ առիթ ներկայացաւ խիստ կերպով իւր կարծիքն արտայայտելու ահն մարդու ներկայութեամբ, որի առաջ նա այնքան նուաստացնում էր ինքն իրան:

— Բայց Մակոլէլը ²⁾ ինքը, — սկսել էր Կուկչինան, ...:

— Կորչի Մակոլէլը, — որոտաց Միտնիկովը: — Դուք պաշտպանում էք այդ կնանոնց:

— Այդ կնանոնց չէ իմ պաշտօլանածս, հապա կանանց իրաւունքը, որ ես երդուել եմ մինչև արեանս վերջին կաթիլը պաշտպանել:

— Կորչին, — բայց Միտնիկովն այտեղ կանգ առաւ: — Բայց ես այդ չեմ մերժում:

— Ոչ, տեսնում եմ, որ դուք սլաւեանօֆիլ էք:

— Ոչ, ես սլաւեանօֆիլ չեմ, թէպէտ իհարկէ...

— Ոչ, ոչ, ոչ: Սլաւեանօֆիլ էք: Домострой-ի ³⁾ հետեւող: Ձեզ սազ կ'զալ, որ ձեռներիդ մտրակ ունենաք:

— Մտրակը վատ բան չէ, — նկատեց Բազարովը: — Բայց ահաւասիկ մենք հասանք վերջին կաթիլին...

— Ի՞նչ բանի, — ընդհատեց Սւդոկիան:

— Շամպայն գինու, — լարգելի Աւոտիա Նիկիտիչնա, — շամպայնի, և ոչ ձեր արեան:

— Կարող չեմ անվրդով կերպով լսել, երբ որ լարձակում են կանանց վրայ, — շարունակեց Սւդոկիան: — Սարսա-

¹⁾ Պիեր Ժօզէֆ Պրուդոնը (1809—1869) լատին Ֆրանսիացի քաղաքատնտես էր:

²⁾ Թոմաս Բաբինգտոն Մակոլէլը (1800—1859) Անգլիայի նշանաւոր պատմաբան է և քաղաքական գործիչ, ազատ ոգու և հալեացքների տէր մարդ:

³⁾ Դոմոստրօլը Մոսկուայի մի քահանայի՝ Սիլվեստրի (1560 թ.) շարադրած գիրքն է, որի մէջ բովանդակուած են բազմաթիւ խորհուրդներ ու խրատներ կեա՝քի ամեն կողմերի վերաբերմամբ և, զլխաւորապէս հնամուլութեան տիպար է ներկայացնում: Մ. Թ.

փելի, սարսափելի բան: Փոխանակ նրանց վրայ լարձակուելու, աւելի լաւ է Միշէի ¹⁾ De l'amour *) դիրքը կարդալ: Հրաշալի բան է: Պարոններ, եկէք սիրոյ մասին խօսենք, — աւելացրեց Եղովսիան ձեռքը թալուկ կերպով դահաւորակի ճմռթկած բարձի վրայ ձգելով: Յանկարծական լուռութիւն տիրեց: — Ոչ, թնչ հարկ կալ սիրոյ մասին խօսելու, — սասցա Բազարովը. — դուք, ահա, Օդիսցեայի անունը տուիք... Կարծեմ ալդպէս ասիք: Ո՞վ է ալդ տիկինը:

— Չքնաղ, չքնաղ արարած, — ճչաց Սիտնիկովը. — Ես ձեզ կ'ծանօթացնեմ: Մի խելօք, հարուստ, ալրի կին: Դժբաղդաբար բաւարար չափով դարդացում չունի՝ — լաւ կ'լինէր, որ մեր Եղովսիայի հետ ի մտոյ ծանօթ լինէր: Ձեր կենացը, Eudozie. եկէք բաժակներս չրխկացնենք. «Et toc, et toc, et tin-tin-tin! Et toc, et toc, et tin-tin-tin!!...»:

— Victor, շատ չարածճի էք:

Նախաճաշը երկար տևեց: Եամպանի առաջին շին լաջորդեց երկրորդը, երրորդը և մինչև անգամ չորրորդը... Եղովսիան անդադրում դատարկաբանում էր. Սիտնիկովը նրան արձագանգ տալիս: Երկար ժամանակ խօսում էին, թէ թնչ բան է ամուսնութիւնը — նախապաշարմունք թէ լանցանք, և մարդիկ ինչպէս են ծնւում — միտեսանկ թէ ոչ, և իսկապէս ինչո՞ւմ է անհատականութիւնը: Վերջապէս բանն արտեղ հասաւ, որ Եղովսիան, խմած գինուց բոլորովին կարմրած, և տափակ եղունգներովը խանդարուած դաշնակի ստեղների բաղխելով սկսաւ խոսքոտ ձայնով երգել նախ ցիգանների երգեր, լետոյ Սէյմուր-Շիֆֆի «նիրհում է քնաթաթախ Գրանաղ» ուսմանսը, իսկ Սիտնիկովը զլսին վզնոց փաթաթած թալկահար սիրականի դերն էր կատարում ալդ խօսքերի միջոցին թէ

Եւ թու շրթունքդ իմ չրթանց հետ

Ի ջերմ համբոյր մի դըրոշմուին:

Վերջապէս Արկաղիլի համբերութիւնը հատաւ: Պարոններ պա-

¹⁾ Ժիւլ Միշէն (1798—1874 թ.) նշանաւոր Ֆրանսիացի պատմաբան է և ունի դրած ծանրակշիռ պատմական երկեր. զլխաւորապէս Ֆրանսիայի պատմութեան վերաբերեալ: Վերև ակնարկուած է նրա «սէր», «կինը» գրուածքները, որոնք սիրոյ և ամուսնութեան փիլիսոփայութիւն են: Մ. Թ.

*) Սիրոյ մասին:

րոններ, այս արդէն Բեղլամ ¹⁾ դարձաւ, — նկատեց նա բարձր ձայնով:

Բաղարովը, որ երբեմն միայն խօսակցութեան միջոցին մէկ-մէկ ծաղրական խօսքեր էր բացթողնում — նա աւելի շամպայնով էր զբաղուած — բարձրաձայն յօրանջեց, վերկացաւ և, առանց տանտիկնոջը մնաս բարև ասելու, Արկաղիլի հետ միասին դուրս եկաւ տնից: Սիտնիկովն էլ նրանց ետևից դուրս թռաւ:

— Ինչպէս է, հը, ինչպէս է. — ասում էր նա շողոքորդաբար մի աջ և մի ձախ վաղ տալով, — ասացի հո որ զարմանալի անձնաւորութիւն է. անա թէ ինչպիսի կանալք են մեզ պէտք: Սա իւր տեսակի մէջ մի բարոյական — վեհ երևոյթ է:

— Իսկ քո հօր այս հաստատութիւնն էլ բարոյական երևոյթ է, — ասաց Բաղարովը մատով դիմետունը ցոյց տալով, որի մօտից որ ադ միջոցին անցնում էին:

Սիտնիկովը դարձեալ ճշալով ծիծաղեց. նա սաստիկ ամաչում էր իւր ծագումից և չէր իմանում, վիրաւորուէր թէ ուրախանար, որ Բաղարովը իւր հետ դուով էր խօսել:

XIV

Մի քանի օրից Նահանգապետի պարահանդէսը եղաւ Մատվէլ Իլլիչը իսկապէս «հանդիսի հերոսն էր». նահանգական աղնուականների պարագլուխն ամենքին ու ամեն մէկին չալտնում էր, թէ եկել է միմիայն ի բարգանս Մատվէլ Իլլիչի, իսկ Նահանգապետը մինչև անգամ պարահանդիսի մէջ, մինչև անգամ անշարժ մնացած միջոցին շարունակում էր «կարգադրութիւններ անել»: Մատվէլ Իլլիչի վարմունքի քնքշութիւնը կարող էր հաւասարուել միմիայն նրա վեհութեանը: Նա փալփալում էր

¹⁾ Բեղլամը (Բեթլեհեմի համառօտածը) Լոնդոնի հռչակաւոր դժանոցն է. այդ բառը հասարակ անուն է դարձած նրման հաստատութիւնների համար: Իս շինուած է 1246 թ. իբրև «Բեթլեհեմցի մեր Տիրոջ» ընկերութեան համարնակարան: Այժմն իւր մէջ 600 հիւանդի տեղ ունի և օրինակելի հաստատութիւն է ճանաչուած, մինչ 1547 թուին, երբ Հենրիկոս VIII-ը այդ շէնքը նուիրել էր քաղաքին և քաղաքը՝ շէնքը դարձրել էր դժանոց, հազիւ աչնտեղ 50 - 60 հոգի զետեղուէր:

ամենքին— ոմանց՝ նողկանքի թույլ արտալատութեամբ, իսկ ոմանց էլ լարգանաց նշույով. «en vrai chevalier français» քաղցրարքանում էր կանանց առաջ և շարունակ խոշոր, գիլ ու առանձնակ ծիծաղով ծիծաղում, ինչպէս և վաել էր բարձր պաշտօնեայ մարդուն: Նա թափ տուաւ Արկադիլի մէջքն ու բարձր ձախով նրան իւր «ազգականն» անուանեց, Բազարովին, որ մի հին ֆրակ էր հագած, արժանացրեց մի անուշադէր, բայց ներողամիտ հայեացքի, որ հարեանցօրէն, ալտի վըրայով ձգեց նրա վրայ, և արձակեց մի անորոշ, բայց բարեհամբուր մունչոց, որի միջից կարելի էր որոշել միայն «մա'... շտ...»: Նա մատը մեկնեց Սիտնիկովին ու երեսին ժպտաց, բայց միայն դուլսը շուռ տուած. մինչև անգամ իրեն, Կուլչինալին էլ, որ առանց կրինոլինի ու կեղտոտ ձեռնոցներով էր եկել, բայց որ մազերին դրախտահաւ էր կպցրել, մինչև անգամ Կուլչինալին ասաց. «enchanté»: Խիստ մեծ բազմութիւն կար և երիտասարդների պակասութիւն չկար. ոչ-զինուորականներն աւելի պատերի տակովն էին խոռուած, մինչդեռ զինուորականները եռանդագին պարում էին մանաւանդ նըրանցից մէկը, որ մի վեց շարաթ Պարիզում մնալով սովորել էր մի քանի խիղախ բացականչութիւններ, ինչպէս՝ «zut», «Ah ficherre «pst, pst, mon bibi» և այլն: Նա այդ բացականչութիւնները շատ լաւ էր արտասանում, իսկ Պարիզեան չիկով, և միևնույն ժամանակ ասում էր. «si j'aurais» փոխանակ ասելու «si j'avais», absolument» անշուշտ»-ի մտքով, մէկ խօսքով նա խօսում էր Վերիկաուու-Ֆրանսական այն բարբառով, որի վրայ այնքան ծիծաղում են Ֆրանսիացիները, երբ որ նրանք ոսներին հաւատացնելու հարկի մէջ չեն լինում, թէ նրանք ֆրանսերէն հրաշալի, հրեշտակի նման, comme des anges» են խօսում:

Ինչպէս գիտենք, Արկադիլին լաւ չէր պարում, իսկ Բազարովը ամեններին չէր պարում, — նրանք երկուսն էլ քաշուած էին մի անկիւն. նրանց միացաւ նաև Սիտնիկովը: Նա իւր դէմքին արհամարհական ծաղրի արտալատութիւն տալով ու թունալից նկատողութիւններ շող տալով լանդուզն կերպով մտիկ էր տալիս չորս բոլորին ու ըստ երևութին, ճամբարիտ հաճուք զգում: Յանկարծ նրա դէմքի արտալատութիւնը փոխուեցաւ և, Արկադիլի կողմը դառնալով, ասեալ թէ չիտթուած, ասաց. «Օղինցեալն եկաւ»:

Արկաղիւն շուռ եկաւ և տեսաւ սևեր հագած մի բարձրահասակ կին, որ կանգնած էր դահլիճի դրանը: Կնոջ կազմուածքի արժանատուութիւնը ապշեցրեց նրան: Նրա հոլանի թևերը գեղեցիկ կերպով ընկած էին վալընսակազմ իրանի երկարութեամբ: Յուկարիսի ոտերը փալլուն մազերի վրայով սիրուն կերպով փռուած էին ողորկ ուսերի վրայ: փոքր ինչ կախ ընկած սպիտակ ճակատի տակից խաղաղ ու խելօք, արդարև խաղաղ, և ոչ մտախոհ, նալում էին պարճառ աչքերը: և շըրթունքները ժպտում էին հաղիւ նկատելի ժպիտով: Մի տեսակ փաղաքուշ ու քնքուշ ոյժ էր բուրում նրա դէմքը:

—Մանօթ էք հետը,—հարցրեց Արկաղիւն Սիտնիկովին:
—Մօտ ծանօթ եմ: Ուղիւմ էք ծանօթացնեմ:
—Ինչու չէ...այս կաղրիլից լետոյ:

Օղիւնցեակի վրայ Բազարովն էլ ուշադրութիւն դարձրեց:
—Սա ինչ բան է,—ասաց նա:—Միւս կանանց նման չի: Կաղրիլը վերջանալուց լետոյ Սիտնիկովը Արկաղիւն տարաւ Օղիւնցեակի մօտ. բայց դժուար թէ նա մօտիկ ծանօթ եղած լինէր Օղիւնցեակին, որովհետև ինքն էլ շփոթուեց իւր խօսած միջոցին, Օղիւնցեակն էլ մի քիչ տարակուսանքով էր նրա երեսին նալում: Սակայն երբ որ լսեց Արկաղիւն ազգանունը Օղիւնցեակի դէմքն ուրախ արտախալտութիւն ստացաւ: Նա հարցրեց, թէ Նիկայա Պետրովիչի որդին չէ արդեօք:

—Այո, նրա որդին եմ:
—Ձեր հօրը երկու անգամ եմ տեսել, բայց շատ բան եմ լսել նրա մասին,—չարունակեց տիկինը,—շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալուս:

Այդ միջոցին մի աղիւտտանտ սրարշաւ մօտեցաւ նրան ու կաղրիլի հրաւիրեց: Սա համաձայնեցաւ:

—Պարնում էք միթէ,—խորհանքով հարցրեց Արկաղիւն:

—Այո: Ինչո՞ւ էք կարծում, թէ չպիտի պարելիս լինեմ: Կամ դուցէ ձեզ թուում է թէ իմ պարելու ժամանակս արդէն անցել է:

—Քաւ լինի...ինչպէս կարելի է: Թէ որ այդպէս է, ապա թոյլ տուէք ուրեմն ձեզ մազուրկալի հրաւիրեմ:

Օղիւնցեակն զիջողաբար ժպտաց:

—Համեցէք,—ասաց նա և մտիկ տուաւ Արկաղիւն չէ թէ բարձրից, հապա ուղղակի ալնպէս, ինչպէս որ ամուսնացած զոյր մտիկ կ'տայ իւր խիտ նորատի եղբայրների վրայ:

